

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԴԻՑԱՐԱՆԻ ՏՕՆԵՐԸ

Հայ միջնադարեան սկզբնադարձութիւններէ հազորդած տեղեկութիւններէ, յատկապէս հեթանոսական եւ քրիստոնէական տօնական օրերը համադրելու հիման վրայ որոշում են Հայաստանի նախաքրիստոնէական պանթէոնի աստուածներէ եւ աստուածուհիներէ տօների ժամանակը: Դա կարեւոր է ոչ միայն հայոց դիցարանի մասին մեր սահմանափակ պատկերացումներն ընդլայնելու առումով, այլեւ նրանով, որ հնարաւորութիւններ են յայտ գալիս նոր հարցադրումներ, հիմնասնդիրներ առաջադրելու եւ նորովի լուսարանելու, քացայայտելու համար:

Ղ. Ալիշանը 1901ին «Հայապատում» աշխատութեան մէջ Յովհաննէս Կոզեռնիկոսի մասին քաջամարտի Վեներաբիլիս գրչագիր ձեռագրի հիման վրայ հրատարակել է Վարդապետի տօնին նուիրած բնագրից մի հատուած: Մեծանուն գիտնականն այն վերագրել է Յովհաննէս Կոզեռնիկոս ակնբերեալար բլնելով գրչագիր տուեալներէ (Ղ. Ալիշան, Հայապատում, Վեներաբիլի, 1901, էջ 89-91): 1905ին Ֆ. Կոնիքերը Նորուադէմի ձեռագրից քաջել է նոյն բնագրի կրկնօրինակի համարժէ հատուածը, թարգմանել անգլերէն եւ կատարել իր ոչ հիմնաւոր մեկնաբանութիւնները (C. F. Conybeare, *Rituale Armenorum*, Oxford, 1905, p. 508-514) որոնցից մի քանիսն կ'անգրադառնան ստորեւ: Ն. Արք. Պողոսեանը Նորուադէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրերի մկարագրութեան մէջ հրատարակել է Ֆ. Կոնիքերի, ինչպէս եւ Ղ. Ալիշանի հրատարակած բնագրի համադրելի հատուածը (Ն. Արք. Պողոսեան, Մայր Յուրակ ձեռագրաց

Սրբոց Յակոբեանց, հատոր չորրորդ, Նորուադէմ, 1969, էջ 452): Նորուադէմի ձեռագրում այդ բնագիրը յաջորդում է Յովհաննէս Կոզեռնի գրած Վարդապետի տօնի մեկնութեանը, ունի առանձին, ուրոյն խորագիր, այն է «Այլուստ պատմառ դարձեալ սոյն տաւնի» (Վարդապետի) (ձեռ. թիւ 1272, էջ 149բ): Պարզ է, որ ստորեւ բերուելիք հատուածը Նորուադէմի բնագրում, չի վերագրուել Յովհաննէս Կոզեռնիկոսին, ինչպէս ենթադրել է Ղ. Ալիշանը, առաւել եւս Գրիգոր Արշարունուն, որի մասին անբերայ գրել է Ֆ. Կոնիքերը (որին կրկնել է Ն. Ալիշանը) այլ մի անյայտ հեղինակի, որի ժամանակը եւ անձը տակաւին անհրաժեշտ է պարզել: Բնագրում սակայն առկայ են տոմարական գուգահեռներ, որոնք հնարաւորութիւն են ընձեռում թուագրել այն եւ հեղինակի մասին յանգել ենթադրութիւններէ:

Բերեմք մեզ հետաքրքրող հատուածը երկու գրչագրերի համադրութեամբ. «... Ջի ի Նաւասարդի Ան (Ղ. Ալիշանի մօտ Մին) տաւնէին Արամագղայ (Նորուադէմի թիւ 1272 ձեռագրում Արամագղա) եւ ի ԺԵ-ն (Ղ. Ալիշանի մօտ՝ հնգեռասան) Անահտայ (Նորուադէմի թիւ 1272ում Անահտայ), եւ ի Սահմի հինգ (թիւ 1272ում յեւթմ) տաւնէին Վահեան եւ Վահագնի եւ յամառնային ժամանակս տաւնէին Ափորդիտ... Իսկ սուրբն Գրիգոր անեալ զմեզ ի յոյս Աստուածագիտութեանն, իւր գրիական (թիւ 1272ում դիական) ստիգութիւնն եւ ի Յշարտութիւնն փոխել եւ ընդդէմ մոցին կարգել ի Նաւասարդի Ան (Ղ. Ալիշանի մօտ՝ մի) Յովհաննու Կարապետին տօնել (թիւ 1272ում չիք տօնել) եւ ի Ժ եւ Ե-ն (Ղ. Ալիշանի մօտ՝

հնգետասան) Աւետեաց Աստուածածնի, եւ ի Սահմնի հինգ (թիւ 1272ում՝ յէն) Յովհաննու (Ղ. Ալիշանի մօտ Յովաննու) եւ Աթանագինէ եւ գՎարդեալոսի տանել զերեւումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի թափովրական (Ղ. Ալիշանի մօտ Թարովրական լերինն՝ արիմադրէ...» (Ղ. Ալիշան, տե՛ս անդ էջ 90-91, Գ. Կոնիքեր, անդ էջ 512, անգլ. թարգմանութիւնը, Ն. Պողարեան, անդ էջ 452՝ Երուսաղէմի թիւ 1272 ձեռագիր, էջ 149բ - 153ա):

Վերջերս հրատարակուած Ռ. Վարդանեանի աշխատութեան մէջ հիմնաւորուած է բնագրերի ժամանակի սահմանումը հայոց տոմարական եղանակով (Տե՛ս Ռ.Վ. Վարդանեան, հայոց տօմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երեւան, 1993): Այստեղ անհրաժեշտութիւն չենք տեսնում ծանրանալ թուագրման այդ սկզբումքի լուսաբանութեան վրայ: Յարմար ենք նկատում ուղղակի անդրադառնալ խնդրոյ առարկայ բնագրի ժամանակի որոշմանը:

Ըստ վերը քերուած տուեալների Անահիտի տօնի օրը, այն է Նաւասարդի 15ը համարժէք է ընդունել Աւետեաց Աստուածածնի տօնի օրուայ հետ: Վերջինիս տօնի օրուայ ամսաթիւը Յուլեան տոմարով թեւ ընագրում քացակայում է իբրեւ գուգահեռ հայոց շարժական տոմարի ամսաթուի՝ Նաւասարդի 15ի, սակայն հանրայայտ է, որ Աւետեաց Աստուածածնի տօնի օրը անշարժ էր եւ վաղ շրջանում մշտապէս կատարուել է Ապրիլի 6ին (ձեռ. թիւ 179, Ձեռ. թիւ 979, էջ 393ա, ձեռ. թիւ 2092, էջ 225ա) իսկ ուշ շրջանում՝ ապրիլի 7ին (ձեռ. թիւ 9878, էջ 166ա, ձեռ. թիւ 940): Այլ խօսքով հայոց շարժական տոմարի Նաւասարդի 15ը համադրելի է Ապրիլի 6ին: Դժուար չէ որոշել այն տարեթուերի բառամեակը, երբ գրուել է ճնարկուող բնագիրը:

Այսպէս, Նաւասարդի 15 Ապրիլ 6, որտեղից Նաւասարդի 1 Մարտ 23 = 992-995թ. Առաւել ստոյգը 992 թուականն է: Այն հիմնաւորում է մերոյ յիշեալ հաշուարկով: Ըստ բնագրի տուեալների Գրիգոր Լուսաւորիչը Վահեան եւ Վահագնի տօնը փոխել է եւ կարգել Յովհաննէս Կարապետի (Մկրտչի) եւ Աթանագինէի տօնը՝ Սահմի 5ին՝ (տարընթերցումս 7ին) Հայոց քրիստոնէական «Տօնացոյց»ում Յովհաննէս Կարապետի եւ Աթանագինէի տօնի օրը եղել է Պետեկոստեից հաշուած 12րդ օրը՝ հինգշաբթի (Ձ. թիւ 4514 էջ 252ա եւն) այն է 992թ. Սահմի 5 = մայից 26, 1993թ. սահմի 25 = Յունիսի 15, 994թ. Սահմի 9 Մայիս 30 եւ 995 հոռի 30 Յունիսի 20: Յովհաննէս Կարապետի եւ Աթանագինէի տօնը Պետեկոստեից հաշուած 12րդ օրը, հինգշաբթի, Սահմի 7ին ամենավաղ ժամանակ եղել են հետեւեալ տարիներին. 975թ. Սահմի 7 Յունիս 3, 989թ. Սահմի 7 = Մայիս 30, 1003թ. Սահմի 7 Մայիսի 27:

Պարզուում է, որ Ղ. Ալիշանի մօտ փաստագրուած սահմի 7ը ստոյգ է, քանի որ Սահմի 7ը վերոյիշեալ բոլոր արժէքների դէպքում համարժէք չէ Անահիտ-Աւետեաց Աստուածածնի տօնի օրուայ հետ: Համադրուած երկու տօնական օրերի, այն է. 1. Անահիտ-Աւետեաց Աստուածածնի, 2. Վահեան-Վահագնի-Յովհաննէս Կարապետի եւ Աթանագինէի, հաշուարկները փոխադարձօրէն հիմնաւորում են, որ յիշեալ բնագրի գրութեան ժամանակը 992 թուականն է: Ի դէպ Սահմի 7ը բնագրի ընդօրինակուութեան մէջ ընդմիջարկուել է անիլի ուշ ժամանակ, այսինքն 12րդ դարում, հաւանաբար նկատի ունենալով վաղ շրջանում գրուած բնագրեր, յատկապէս Ագաթանգեղոսի պատմութեան տուեալները, որոնք Յովհաննէս Մկրտչի տօնի օրուայ համար թեւ ունի հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիւ՝

Սահմի 7ը սակայն բոլորովին այլ համարժեքով համեմատած Յուլիան տոմարի հետ: Այս մասին կը խօսուի ստորեւ, որն անկասկած պարզութիւն կը մտցնի եւ համեմատելու հնարաւորութիւն կ'ընձեռնի: Այսպիսով քննարկուող բնագրի գրութեան ժամանակն է 992 թուականը, հետեւապէս բնագրի մէջ բերուած միւս բոլոր հաշուարկները հիմնուելու են այդ թուականից բխող տօնական տարուայ օրերի վրայ: Կարեւորը տուեալ դէպքում այն է, որ վերոյիշեալ տօների օրերը ստանում ենք տօնական տարուայ կտրուածքով, մասնաւոր հայոց շարժական տօմարի ամիս-ամսաթուերի պայմաններում, որոնք անշարժ տօմարի նկատմամբ ունեն տարբեր համարժեքներ եւ ընդհանրապէս ընթերցողի, հետազոտողի համար դժուար ընկալելի են: Պատահական չէ, որ մինչեւ այժմ ուսումնասիրողները առաջնորդուել են հայոց անշարժ եւ Գրան համապատասխանող Յուլիան տօմարի համարժեքներով, որոնք քաջարձակօրէն չեն համընկնում նախաքիստոնեական տօնական տարուայ օրերի հետ: Դառնալով բնագրի հեղինակի խնդրին քացառուած չէ, որ Յովհաննէս Կոզեմնէ է կամ Սամուէլ Կամբջանորեցին է: Արդ ինչպէս է պատկերացրել Կոզեմնէ հայոց հեթանոսական աստուածների տօների օրերը, երբ դրանք համադրել է քրիստոնեական տօների օրերի հետ: Ի դէպ Յովհաննէս Կոզեմնի գործունեութեան վաղ շրջանը համընկնում է 992 թուականի, իսկ Սամուէլ Կամբջանորեցուն ուշ շրջանի հետ:

Ներկայացնեմք տօները տարեկան: Հարկ է նշել, որ ուսումնասիրողները (ՏԵՍ *Мифы народов мира, 1980, Армянская мифология*, С. 104-106

աղբիւրների եւ գրականութեան ցանկը) ցոյց են տուել, որ Արամագղը հայոց նախաքիստոնեական դիցարանի գերագոյն, գլխաւոր աստուածն է, աստուածների եւ աստուածուհիների հայրը՝ «հօրն անուանեալ դիցն ամենայնի», Երկնի եւ Երկրի՝ արեւի, լուսնի, աստղերի, ծովի եւ ցամաքի արարիչը, համարուել հայերի ստեղծողը: Արամագղը լիութիւն եւ բարօրութիւն է պարգեւել Հայաստան աշխարհին, ինչպէս եւ արիւթիւն բաշխել հայերին: Վերջինիս տրուել են հայր, մեծն եւ արի մակդիրները: Արամագղը համադրուել է Ահուրամազդայի, Որմզդի, Ջեվսի եւ Դիոսի հետ: Ինչպէս տեսանք բնագրի հեղինակը Արամագղի տօնի օրը հաւասար է համարել Նաւասարդի 1ին, այն է տարեգլխին - տարեկանին, որը 992ին համարժեք էր մարտի 23ին: Նա միաժամանակ համադրել է Յովհաննէս Կարապետի տօնի օրուայ հետ:

Հայոց քրիստոնեական Տօնացոյցում Յովհաննէս Կարապետին նուիրուած տօնական օրերը շատ են եղել, առնուազն չորս, որոնք կատարուել են օրացուցային տարուայ տարբեր ամիս-ամսաթուերին: Տուեալ դէպքում բնագրի հեղինակը նկատի է ունեցել Յովհաննէս Կարապետի այն տօնի օրը, որը կատարում էին Ջատիկից յետոյ եղող շաբաթ օրը (ձեռ. թիւ 4514, էջ 171ա) այսինքն՝ Ջատիկից հաշուած 7րդ օրը: 992 թուականին Ջատիկը կատարուել է Նաւասարդի 5ին (Մարտ 27), իսկ Յովհաննէս Մկրտչի տօնը՝ Նաւասարդի 11ին (ապրիլի 2): Հարկ է նշել, որ Յովհաննէս Կարապետի տօնի օրը՝ Նաւասարդի 1ը, Ջատիկից հաշուած 7րդ օրը, հայոց քրիստոնեական տօնացոյց է մտել 9րդ դարի 2րդ կեսից, քանի որ այդ տօնի օրը Նաւասարդի 1ին է հանդիպել առաջին անգամ՝ 862 թուին, երբ Նաւասարդի 1ը համարժեք էր ապրիլի 25ին, երկրորդ անգամ՝ 876 թուին, երբ

Նաւասարդի 1ը գուգակշիռ էր ապրիլի 21ին եւ երրորդ անգամ 890 թուականին երբ Նաւասարդի 1ը համադրելի էր ապրիլի 18ին: Ինչպէս նկատելի է բնագրի հեղինակը մօտաւոր ձեւով է գուգակշռել Արամագդի եւ Յովհաննէս Կարապետի տօների օրերը քանի որ մի դէպքում ստանում ենք մարտի 23, որովհետեւ 992 թուականին Նաւասարդի 1ը համարժէ էր մարտի 23ին, միւս դէպքում՝ Նաւասարդի 11ին համադրելի ապրիլի 2ի հետ: Այս հաշուարկումները հնարաւորութիւն են ընձեռնում որոշել Արամագդի տօնի օրը՝ յենուելով այլ սկզբնաղբիւրների տուեալների վրայ, որոնք ինչպէս կը տեսնենք, բացայայտում են յիշեալ մօտաւոր հաշուարկի իմաստը: Կարեւոր է այն, որ բնագրի հեղինակը Արամագդի տօնի օրը համարելով Նաւասարդի 1ը մատնանշել է տարեսկիզբը, որը համադրել է մարտի 23ի հետ:

Յիշատակենք վաղ շրջանի տուեալներ ըստ հեղինակների, որոնք հիմնաւորում են գարնանամուտը, տարեմուտը, գարնանային գիշերահաւասարը, արեւային տոմարական տարուայ սկիզբը եւ նրանց անշարժ տոմարների համարժէքները: Ըստ Փիլոն Երրայեցու 1. «Ամիսս այս ձեզ սկիզբն ամսոյ: Առաջին է յամիսս (Նիսան) տարուոյ: Ա ի գարնանային հասարակօրութենէ զշրջագայս ամսոյն կարծէ պարտ թուել. իսկ առաջին եւ սկիզբն՝ ըստ բազումութեան է ասացեալ, նոցումց ի միմեանց զեկուցելոց: Քանզի ասի առաջին, է որ դասիլ՝ եւ է որ զօրութեամբ. նոյնպէս եւ սկիզբն երեւի այն որ ի գարնանային հասարակօրութենէ ամանակն, եւ դասիլ եւ զօրութեամբ յառաջացեալ. զոր օրինակ ի կենդանոց գուլի: Արդ՝ զայս եւ որք յաստեղաբաշխութեանն իմաստունք ասացելով ժամանակիս դնեն զամուսն. քանզի գուլի կենդանաբերին՝ կոչեն գիտոյն. յորում երեւեալ արեգակն՝

ծնանի ըզգարնանային հասարակօրութիւնն եւ առ այտքիւք եւ որ տարուոյն ժամանակաց ծննդոցն ել դէպ եղեւ սմա» (Փիլոնի Երրայեցույ մնացորդք ի Հայս ..., աշխատասիր. Մ. Ալգերեանի, Վնեստիկ, 1826, էջ 443-444): Ըստ Անդրեասի 1. «(Արդ սկիզբն) հասարակելոյ տուրնջեան եւ գիշերոյ ըստ թուոյ եզիպտացոցն ի Ի եւ ի Դ (24) մասոյն լինի որ անուանեալ կոչի Պեմնոմվթ որ գա կշռի ըստ թուոյն Անտիոքացոց ի Ի երորդում 20 Դիւստրոս ամսոյն այսինքն մեհեկանի եւ քանզի Քրիստոս Դժերորդ աւուր ամսոյն առաջնոյ (Նիսան 14) չարչարեցաւ յայտ է յետ հասարակելոյ տուրնջեան եւ գիշերոյ արեգ (նիսան) ամսեան եւ ոչ այս վրիպեալ է ի մէջ, թէւս այժմ ի մեր ամս եւ յաւուրս յարեգ ամիս են, քազում անգամ արարին հրեայք զգատիկն եւ քանզի սկիզբն ամենայն տարուոյն յ Թժ. երորդի մարտ ամսոյն լինի, այսինքն ի մեհեկանի. յայտ է թէ նա է ամիսն առաջին» (Աշ. Արրահամեան, Անդրէասի տոմարական աշխատութիւնները, ՏԵՄ բնագիտութեան եւ տեխնիկայի պատմութիւնը Հայաստանում, հ. VI Երեւան, 1967 էջ 77-78): 2. «Եւ արդ (յետ) հասարակաց տուրնջեան եւ գիշերոյ սկիզբն է տարոյն եւ ամսեանն առաջնոյ (Նիսան), քանզի ամիսն առաջին անտի առնու սկիզբն» (Անդ): Ըստ Կիրեղ Այեֆսանդրացու՝ 1. «Կատարիւր սրբոյ զատիկն տօնն ըստ Մովսէսի օրինացն, ի չորեքտասներորդում աւուր ամսոյ առաջնոյ (Նիսան 14 ապրիլ 4), ըստ երրայեցոցն սովորութեան ասեմ, յամսեանն նորոյ, յորժամ ամենայն ինչ փթթի ի վայրի» (C. F. Conybeare, The armenian version of revelation and Cyril of Alexandrias scholia on the incarnation and Epistle on Easter, London, 1907, p. 146): 2. «Արդ կատարումն օրինաց է Քրիստոս, եւ զոր ի վերայ կատարեմք տօն յառաջնումն ամսեան ի չորեքտասան-

երորդում աուրս (Նիսան 14 ապրիլ 4), ըստ լուսնի պարագայութեան եւ սկսանի ըստ երբայեցոցն սովորութեան առաջին ամիսն. եւ զարնանային յեղանակ յառաջ քան զերկոտասան կաղանդացն ապրիլի (մարտ 21) ըստ արեգակնային ընթացից: Արդ՝ պիտոյժ տեսանիլ առ ի մէնջ, եթէ զչորեքսասաներորդ լուսնին. ոչ երկոտասաներորդն համարեալ ամիս, այլ ի սկսանի զարնանային յեղանակին եւ առաջնոյն ամսոյն ըստ երբայեցոցն» (անդ էջ 48):

Ըստ «Գիրք Պիտոյից» հեղինակի՝ 1. «Այլ աքանջեալապէս եւ զպատիւ գոյացութեանն ունին երկոքին ի միոջէն պատճառէ, ի մէծն ասեմ արեգակնային լուսաւոր պարգեւութեմէն, վասն զի յորժամ փոփոխեալ զգնացսն ի խոյն կոչեցեալ դարձի կենդանակ. յորժամ զվայելական զգարնայնոյս ծնանի ժամանակ» (Գիրք Պիտոյից, Երեւան 1993, էջ 165): 2. «Այլ զի սկիզբն ամսոց եւս մասկարգեալ եղիւ եւ ի պայծառակարգիցն ընդունակ ի հմումն եւ ի մորումն եւ արժանի արգար եւ բոլորովին Աստուծոյ հաճոյիցն գտեալ» (Անդ, էջ 168):

Ըստ Անանիա Շիրակացու՝ 1. «Ամուսնմ ամսոցն ոչ էին յիսկգրանէ: Այլ սկսեալ յԱդամայ մինչեւ ի Մովսէս զգարնամամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք եւ ամսոց անուամբ ոչ գոյր, բայց միայն զառաջին լուսին զգարնան առաջին լուսին անուանէին, եւ զկնի Բ. երորդ լուսին եւ Գերորդ եւ Դերորդ մինչեւ զԺամերորդն եւ զողոյնն ամիս՝ այսպիսի անուամբ վարէին մինչեւ ի մուտն զարնանային: Եւ դարձեալ յառաջին դառնային» (Անանիա Շիրակացի Տիեզերագիտութիւն եւ տոմար, Երեւան, 1940, էջ 76): 2. «Բանգի ասն վարդապետք երբայեցոցն եթէ ի չորրորդ աւուր էմարտ 20) ստեղծու արեգակն եւ լուսին. վասն այնորիկ հասարակաւորութիւն տուրնջեան

եւ գիշերոյ դնեն զաւրն զայն ասելով, եթէ յերկնամիջակի իսկ էր ստեղծումն եւ իր վեցերորդ աւուրն (մարտ 22) ասն լեալ զմարդն եւ յաւրէն իսկ յառաջ ի թիւ արկեալ զամիսս համարի ասնն եւ զերկոտասանամսեայ կատարեալ զթիւ տարեկանին, անք եւ հինգ աւր աւելիս, որ յառաջ քան զստեղծանել մարդոյն եղիւ: Արդ յայտ է թէ զտարի յարեգակ (ան) է գիտացուք, եւ զամիս ի լուսնոյ, որպէս եւ աստուածային բարբառն վկայէ յասելն եթէ՝ եղիցի ի նշանս, եւ ի ժամանակս եւ յաւուրս եւ ի տարիս» (Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 293): 3. «Բայց մեք երթիցում անդէմ ի հրամանն Տեառն որ առ Մովսէսն ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ» (Անդ էջ 293): 4. «Արդ յաւուր ուրբաթու ստեղծու մարդն նիսան ամսոյ ամսամուտ (Մարտ 22) էր» (Անդ էջ 311): 5. Եւ միշտ է նիսան գոլ զարումն յեղանակին այս այսպէս է (Տիեզերագիտութիւն եւ տոմար, էջ 67): 6. «Մարտ ամսոյ որ աւր ի (20). երբայեցոյցն աւելեացն Դ (4), մտանէ արեգակն ի խոյն, որ է գլուխ» (Շիրակացու մատենագրութիւնը, էջ 15): 7. «Եւ ի Դ աւելեացն է (Մարտ 20) միշտ հասարակաւորութիւն տուրնջեան եւ ի գիշերոյ եւ եղանակ զարնանային» (Անդ էջ 315): Համարժէք բազմաթիւ վկայութիւններ կան ինչպէս վերոյիշեալ հեղինակների, այնպէս է Յովհաննէս Կոզմոնի, Յովհաննէս Իմաստասերի եւ միւս տոմարագէտների քննարկում: Կարծում ենք քերական վկայութիւնները բաւարար են առաջադիւր խնդիրը լուծելու համար: Այնպայտ է, որ Անանիա Շիրակացու քառերով «զգարնամամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք», նկատի է ունեցել այն ժողովուրդներին, յատկապէս հայերին եւ երբայեցիներին, որոնց տոմարական տարուայ սկիզբը սկսել է զարնան

սկզբնաւորումով: Հայոց շարժական տոմարի գարնանամուտը, այն է Նաւասարդի 1ը համադրուել է Մարտի 20ին, իսկ երբայեցիների անշարժ տոմարի նիսանի 1ը՝ մարտի 22ին: Հետաքրքրական է այն, որ Նաւասարդի 1ով սկսուող հայոց շարժական տոմարի տարին (365 օր) իր 1460 ամեայ պարբերաշրջանը աւարտեց հայոց ՆԾԲ թուականով եւ հայոց ՆԾԳ թուականից սկսեց նոր շրջապտոյտ, որը նոյնպէս համարուէ՛ է Նաւասարդ 1 (Մարտ 20): Այս մասին քացատութիւն ունի Յովհաննէս սարկաւազը, որին կ'անդրադառնանք ստորեւ:

Վերը բերուածը ցոյց է տալիս, որ Նաւասարդի 1ը Արամազդի տօնի օրը սերտօրէն կապուած էր Արեգակի շրջափուլի սկզբի հետ, որին իր շրջապտոյտը սկսում էր Նոյի համաստեղութիւնից՝ այն է մարտի 20ից: Այդպիսին էր Արեգակնային տարուայ սկիզբը սկսած շուրջ 1000 թուականից, մինչեւ մ.թ. շուրջ 1000 թուականը (*Յ. Букерман, Хронология древнего мира, Москва, 1975 г. 54*): Արամազդի տօնի օրը հեթանոս հայերն ընդունել են Նաւասարդ 1ը, որը համարժէ՛ էր գարնանամուտին օրուայ, այն է մարտի 20ի հետ: Նաւասարդի 1ը միաժամանակ հայոց շարժական տոմարի տարեգլուխն էր եւ այս աւանդոյթը փոխանցուել է սերնդից սերունդ, տեղ գտել հայ քրիստոնեայ մատենագիրների երկերում: հայոց օրանուններից առաջինը կրում է Արեգ անունը: Այն ակներեւաբար նուիրուած էր Արամազդին եւ նշանակում էր արեգակնային տարուայ առաջին օր, այն է սկիզբ: Փաստերի թելադրանքով կարող ենք պնդել, որ Հայոց նախաքրիստոնէական դիցարանի տօնական տարին սկսուել է գերագոյն, գլխաւոր աստծու՝ Արամազդի տօնով եւ այն թէւ հայոց շարժական տոմարի, հաստատուն կերպով եղել է գարնանամուտին, որն ընդունուել

է գարնանային գիշերահաւասարի օրը: Այն իր հերթին հիմնաւորում, հաւաստի է դառնում Նաւասարդ 1ով, համարժէ՛ Յուլեան տոմարի մարտի 20ին: Ներկայումս գարնանային գիշերահաւասարը, ինչպէս յայտնի է լինում է մարտի 20ին եւ 21ին (նայած տարուան): Ամանիա Շիրակացու կազմած 532-ամեայ պարբերաշրջանի մէջ, որտեղ համադրուած են Յուլեան անշարժ եւ հայոց շարժական տոմարների համարժէքները, գարնանային գիշերահաւասարի օրը անշարժ է եւ դրուել է մարտի 20ին: Նա՛ միայն փոխել է հայոց շարժական տոմարի ամսաթուերը: Այլ խօսքով գարնանամուտի, այն է տօնական տարուայ տարեակզրի գազափարը եղել է հաստատուն, ինչպէս հայոց քրիստոնէական տօնացոյցում, երբ դրուել է Յունուարի 6ին՝ Քրիստոսի ծննդեան եւ յայտնութեան օրը եւ այդ անշարժ սկզբների համեմատ փոխուել են հայոց շարժական տոմարի ամսաթուերը: Առ այսօր անյայտ է որեւէ վկայութիւն այն մասին, որ հայոց շարժական տոմարի մէջ որոշակի տարիներից յետոյ մտցուել է ուղղում ինչպէս պարսկականի մէջ (որը կատարել են 120 տարին մէկ անգամ եւ դա պարզուում է չի խանգարել հաշուումներին):

Ինչպէս քրիստոնեայ Շիրակացուն, այնպէս էլ հեթանոս Բրմին դժուար չի եղել տունալ տօնական տարում հաշուարկել եւ համադրել բնական գարնանամուտը, արեւային տարուայ սկիզբը, գարնանային գիշերահաւասարը, տարեմուտը՝ Նաւասարդի 1ը հայոց շարժական տոմարի այն ամսաթուի հետ, որը եղել է տունալ ժամանակ: Մանաւանդ շրջակայ ազգերը սկսած մ.թ.ա. առաջին դարից օգտուում էին Յուլեան անշարժ տոմարից եւ նրա տեղական տարբերակներից: Պատահական չէ, որ Նաւասարդի 1 - գարնանամուտ - տօնական տարուայ սկիզբ՝ արեւային տարուայ սկիզբ Արամազդի տօնի օր

համարժեքները հասել են միջնադար եւ համադրուել քրիստոնէական սրբերի տօներին հետ: Արամազդի տօնի հիմնական կենտրոնը Դարանաղեաց գաւառի Անի ամրոցն էր Եփրատի ափին, որտեղ հաստատուած նրա տաճարում էր գտնուում Արամազդի արձանը: Անյայտ է, որ Արամազդի տօնը կատարուել է մաււ Հայաստանի միւս մեհեաններում:

Արամազդի տօնին յաջորդել է Անահիտ աստուածուհու տօնը: Առկայ փաստերով հետազոտողները ցոյց են տուել, որ Անահիտը համարուել է «փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ», «մայր ամենայն զգաստութեանց», «քարեղար ամենայն մարդկան բնութեան», «որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս հայոց» (Ագանթանգեղեայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909, էջ 31): Նրան տրուել են տարբեր մակդիրներ մեծն Անահիտ տիկին, Ոսկեհատ, Ոսկեմայր, Ոսկեծին եւայլն: Անահիտի խորհրդանշն էր լուսինը: Նրան համեմատուել են պարսկական (Անահիտի, Արտեմիսի եւ Ափրոդիտէի հետ: Հետեւեմք վերոյիշեալ բնագրի հաւանական հեղինակ Յովհաննէս Կոզեմին կամ Սամուէլ Կամբջանդեցուն: Անահիտի տօնի օրը դրուել է Նաւասարդի 15ին եւ համեմատուել Աւետեաց Աստուածածնի տօնի հետ: Ինչպէս վերը ցոյց տրուեց Աւետեաց Աստուածածնի տօնի օրը անշարժ էր եւ որ մշտապէս այդ տօնը կատարուել է ապրիլի 6ին (Յուլեան տոմարով) 992 թուականի Նաւասարդի 15ը հաւասար էր ապրիլի 6ին: Հասկանալի է, որ այս տօնի օրը հայոց շարժական տոմարով եղել է տարբեր ամիս - ամսուաթուրի: Բնագրի հեղինակը հիմնականում ճիշտ է փոխանցել աւանդութիւնը կամ գտել՝ համադրելով

Աւետեաց Աստուածածնի տօնի օրուայ հետ: Հաւանաբար իբրեւ լուսնի աստուածուհի Անահիտի տօնի օրը պէտք է կապել լուսնի 19ամեայ պարբերաշրջանի առաջին տարուայ լուսնի լրման օրուայ հետ, որը հայերի, ինչպէս եւ քրիստոնեայ չարչարանաց օրուայ Նիսան 14 = ապրիլի 4ի հետ: Ասեմք մաււ, որ լուսնի լրման առաջին օր է դրուել մաււ ապրիլ 1-6ի օրերը: Ուշագրաւ է, որ մարտի 20ից խոյի համաստեղութիւնից սկսուող արեւային տոմարական տարին ապրիլի սկզբի լուսնի լրումներով աղերսուել է լուսնայի ամիսների հետ: Բանի որ հայոց շարժական տոմարի 1460ամեայ պարբերաշրջանի սկզբում Նաւասարդի մէկը եղել է մարտի 20ը, ապա մարտի 15ը ընկնում է ապրիլի յին: Ինչպէս նկատուի է Աւետեաց Աստուածածնի կայուն օրուայ եւ Անահիտի օրուայ պարբերութիւնն աննշան է եւ համադրելի: Հայոց օրանունների մէջ 19րդը նուիրուած է Անահիտին: Եթէ ընդունեմք որ այն Նաւասարդի 19ն է ապա կը ստանանք ապրիլի 75 որը նոյնպէս տալիս է ապրիլի սկիզբները:

Այսպիսով Անահիտի տօնի օրը համադրելի է Գրիստոսի չարչարանաց եւ Աւետեաց Աստուածածնի օրերի հետ, որոնք անշուշտ տոմարներով արտայայտում էին Նիսան 14 (ապրիլի 4ը, եւ ապրիլի 6ը (ըստ Յուլեանի): Այլ խօսքով մախաբիստոնէական շրջանում Անահիտի տօնը կատարուել է ապրիլի սկզբներին, որը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթուրով կը լինի տարբեր, սակայն էութիւնը մնում է նոյնը՝ այսինքն որ այն արտայայտել է լուսնային ամսուայ կապը արեւային տարուայ հետ եւ լուսնի լրման առաջին տարուայ գաղափարը:

(Շարունակելի)